

ԲԱՌԻ ՏԵՐՄԻՆԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

Բառային կազմի իմաստաբանական մասնատման սկզբունքներից մեկը կարելի է համարել բառի և տերմինի, ընդհանուր գործածական բառապաշարի ու տերմինային բառապաշարի հակադրությունը: Ոչ տերմինային բառերի օգտագործումը որպես տերմին ավելի բարդ երևույթ է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Այս խնդրի հետ կապված են մի շարք թույլ լուսաբանված հարցեր, մասնավորապես՝ բառի նույնության խնդիրը, որն իր հերթին անբաժանելիորեն կապված է համանունության և բազմիմաստության հետ¹: Տերմինաբանական դրականության մեջ տերմինի և բառի տարբերական չափանիշները սահմանելիս սովորաբար ելնում են բառի և տերմինի, ընդհանուր գործածական և տերմինային բառապաշարների հակադրությունից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել տերմինը սովորական բառից տարբերող հետևյալ հատկանիշները. ա) Տերմինների ճշգրիտ հարաբերումը իրենց արտահայտած հասկացություններին՝ ի տարբերություն սովորական բառերի, որոնց նշանակած հասկացությունների ծավալն ավելի լայն է: Դա նշանակում է, որ տերմինի և նրա համապատասխան հասկացության կապն ավելի սերտ է, անմիջական ու «թափանցիկ», քան բառի և նրա արտահայտած հասկացության: բ) Տվյալ մասնաճյուղի տերմինների միանշանակությունը, մենիմատությունը՝ ի տարբերություն բառերի, որոնց բնորոշ է բազմիմաստությունը: գ) Տվյալ տերմինաբանական համակարգի տերմինների հարաբերակցությունը միմյանց նկատմամբ:

Լեզվի ընդհանուր բառապաշարը տերմինաբանական բոլոր համակարգերն համալրում է բառերով: Սակայն, ընկնելով գործառության նոր միջավայր, լեզվի ընդհանուր բառերը սկսում են որոշակի տարբերվել այդ կարգի մնացած բառերից. դա բխում է տերմինների գիտական հասկացության նշան լինելու գործառությունից: Որպես նշան տերմինին բնորոշ է միանշանակ հարաբերումը՝ հասկացությանը՝ մի նշան—մի հասկացություն, մի հասկացություն—մի նշան: Սակայն, քանի որ տերմիններն ընդհանուր լեզվի բառային համակարգի անդամներ են, նրանց բնորոշ են նաև այնպիսի կապեր ու հարաբերություններ, ինչպիսիք են հոմանշությունը, բազմիմաստային փնջերը և այլն: Լեզվի սովորական բառերը ոչ միայն բազմանշանակ (բազմիմաստ) են, այլև մրանում են որևէ հոմանշային և հականշային շարքի մեջ: Բացի այդ, յուրաքանչյուր բառ ունի բարդ և տարածված բառակազմական կապեր: Դառնալով տերմինային որևէ համակարգի անդամ, այն որպես բառ չի կորցնում իր կապերը, սակայն որպես տերմին ստանում է նոր որակավորում և մտնում նոր հարաբերությունների մեջ: Չնայած տերմինի բնորոշման հարցում եղած տարածայնություններին, բոլոր տերմինաբանները նշում են նրա հետևյալ երկու հիմնական և պարտադիր հատկանիշները. 1. Տերմինը ստեղծվում է մասնագիտական հասկացությունների արտահայտելու համար: 2. Տերմինը ոչ թե հատուկ բառ է, այլ բառ՝ հատուկ գործառությամբ²:

¹ А. Н. Смирницкий, К вопросу о слове (проблема «тождества слова») («Труды Института языкознания АН СССР», т. 4, М., 1964, с. 53).

² П. О. Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, М., 1939, с. 5.

Նշված հատկանիշները հնարավորություն են տալիս տերմինները և տերմինաբանությունը դիտելու ոչ միայն որպես հատուկ նշանակությունների շարք, այլև իբրև հատուկ հասկացությունների համակարգի արտացոլում: Տերմինաբանությունը տարրեր գիտությունների ենթալեզուների բառապաշարի հիմքն է: Յուրաքանչյուր գիտության տերմինաբանություն միաժամանակ գործում է երկու բառային համակարգերում՝ որևէ բնական լեզվի և որևէ գիտության ենթալեզվի: Այստեղից էլ ծագում է լեզվի ընդհանուր գործածական և տերմինային բառերի հակադրությունը: Պետք է ասել, որ տերմինային բառապաշարը և լեզվի ընդհանուր գործածական բառերը ոչ միայն միմյանց հետ կապված են, այլև փոխներթափանցված: Այդ կապի և փոխներթափանցման մեջ դիտվում է երկու միտում. տերմինացում՝ ընդհանուր լեզվի բառի վերածումը տերմինի և ապատերմինացում՝ տերմինի վերածումը ընդհանուր լեզվի բառի: Առաջին դեպքում տեղի է ունենում գործածության ոլորտների նեղացում, երկրորդ դեպքում՝ ընդլայնում: Լեզվի ընդհանուր գործածական բառը, տերմինանալով, շարունակում է գործել ընդհանուր լեզվի համակարգում, իսկ ապատերմինանալով, չի դադարում գործել նաև որևէ տերմինաբանության մասնավոր համակարգում: Տերմինային նոր գործառություն ստանալով՝ լեզվի համագործածական բառը սկզբնապես կարող է բերել իր հետ կապված բոլոր բառ-հոմանիշները: Խոսքը մասնավորելով՝ ռազմական տերմինաբանության շուրջը՝ կարելի է ասել, որ յուրաքանչյուր բառ-տերմին ռազմական լեզվում սկզբնապես հանդես է գալիս իր բոլոր հոմանշային կապերով: Բերենք մի քանի օրինակ «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանից»³. ИНТЕРВАЛ—միջանց, միջոց, արանք⁴, ИНТЕНСИВНОСТЬ—սաստկություն, զորություն, КАТОК—ակ, անվակ, գլուխ, ЗАХВАТ—հափշտակություն, գրավում, բռնելը, դավթելը, ЗВУК—հնչյուն, ձայն⁵, ИЗГИБ—ծալ (ծռում), (ծովածք), կորություն, ВЕСТЬ—լուր, համբավ:

Տերմինային հոմանիշների ազատ գործածությունն ընդհանրապես բնորոշ է տերմինաբանական համակարգերի ձևավորման վաղ շրջանին, երբ ընդհանուր լեզվի բառը նոր է սկսում գործածվել որպես տերմին և չի կարող մեկուսանալ իր հոմանիշներից, քանի որ ընդհանուր լեզվում դեռևս կենդանի են տերմինացվող բառի բոլոր լեզվական կապերը, որոնք ակամա գիտակցում են տվյալ լեզուն կրողները: Ընտրության որոշակի սկզբունքներ չունենալով՝ տերմին կերտողները մասնագիտական իմաստների հաղորդման ոլորտն են ներգրավում հոմանշային շարքերը, չօգտագործելով լեզվի ընձեռած տերմինացման հնարավորությունները: Այն հանգամանքը, որ նույն հասկացությունների համար երբեմն բառարաններում գործածվում են տարբեր հոմանիշներ (խոսքը վերաբերում է նաև տերմինաբանական կապակցություններին), վկայում է այն մասին, որ կամ տերմինաբանական համակարգը կարգավորված չէ, կամ այդ համակարգում դեռևս չի ավարտվել տերմինացման գործընթացը: Սակայն գիտական տերմինաբանության զարգացման ավելի ուշ շրջանում էլ հաճախ դժվար է սահման դնել տերմինի և ոչ տերմինի միջև: Նախ՝ որևէ բնագավառում տերմինացված բառերը շարունակվում են միաժամանակ օգտագործվել որպես ընդհանուր բառեր: Այնուհետև, ընդհանուր լեզվի բառերի մի մասը տերմինացվում է միայն բառակապակցությունների մեջ (պանեպեի սպա, պանեպեի զորք և այլն), մյուս մասը՝ համատեքստում: Այդ պատճառով էլ տերմինաբանական բառարաններում չպետք է տեղ գտնեն այնպիսի բառեր, ինչպես՝ պահեստ, ներգործություն, խզում և այլն, որոնք առանձին վերցված տերմիններ չեն, այլ ընդհանուր լեզվի բառեր, և որոնք որևէ անմիջական կապ չունեն տվյալ տերմինաբանության հետ: Այդ բառերի տերմինացումը հնարա-

³ Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարան, Երևան, 1941:

⁴ Այստեղ միջոց բառը գործածված է հնացած իմաստով:

⁵ Ռազմական տերմինաբանության մեջ ЗВУК-ը պետք է թարգմանել միայն ձայն իմաստով:

վոր է միայն բառակապակցությունների մեջ, օրինակ՝ պահեստի սպա, պահեստի զորք տերմինային կապակցություններն իսկական ռազմական տերմիններ են: «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանում» մեծ թիվ են կազմում այդ կարգի այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ նշանակ (значок)⁶, գիր, գրութուն, տոմսակ, երկտող (записка), շենք (здание),⁷ նկուղ (погреб), ժամ (час), ժամացույց, պահ, ժամապահություն (часы), հաճախ (частый), թավա (чаща), մախոխ, շշի (щи), խարույկ (костер), վալենկաներ (валенки), վարտիք (кальсоны), ծոծրակ, խզատակ (затылок), բեկում, բեկվածք (излом), լծել (запрягать), վարակում (заражение), ձմեռակին⁸, ձմեռվա (зимний), ձմեռում (зимование), ձմեռանոց, ձմեռում (зимовка), նշանակալի, կարևոր (значительный), հանել, քաշել, քաղվածք անել (извлекать), փոխել⁹, գավաճանել (изменять), զատել, անջատել, մեկուսացնել (изолировать), զատում, մեկուսացում (изоляция), որոնք ռազմական տերմիններ չեն և տերմինացվում են միայն տերմինային կապակցության մեջ:

Քանի որ զինվորներն ունեն իրենց հատուկ խոհանոցը, համազգեստը և այլն, ուրեմն, նշված բառերն ընդհանուր են և՛ զինվորականի, և՛ ոչ զինվորականի համար, օրինակ. վարտիք, վալենկաներ¹⁰ և այլն: Բոլոր ճաշատեսակների, հագուստների անվանումներն ըստ նշված բառարանի պետք է համարել ռազմական տերմիններ: Հետևելով այս սկզբունքին, կարելի է ենթադրել, որ լեզվի գրեթե բոլոր բառերը տերմիններ են ընդհանրապես: Այլ է տերմինային կապակցությունների հարցը: Նշված բառարաններում տերմինային բառակապակցություններն ընկալվում են որպես ռազմական բաղադրյալ տերմիններ. օրինակ՝ խրամատների ծովածք, ծուկ (излом окопов), փամփուշտի պահուցի պայուսակ (запасная патронная сумка), հրացանակոթի խզատակ (затылок ружья), զեզացրի ծոծրակ¹¹ (затылок пулемета), նշանակալի խոշոր ուժեր (значительные силы), սաստիկ կրակ (интенсивный огонь) և այլն:

Տերմինի և լեզվի համագործակցական բառի տարբերությունն ավելի հստակ պատկերացնելու նպատակով անհրաժեշտ է հիշատակել Ա. Ռեֆորմատսկու առաջարկած «տերմինաբանական դաշտ» հասկացությունը¹², որ նշանակում է տերմինի գործածության այն ոլորտը, որից դուրս բառը կորցնում է իր

6 «Նշանակ» բառը ռուսերեն «значок»-ի անհաշող թարգմանությունն է, այժմ՝ բոլորովին անգործածական:

7 Այստեղ շփոթված են ռուսերեն «часы» բառի մի քանի նշանակություններ, որոնցից ռազմական տերմինաբանության համար բնորոշ է ժամապահությունը, հմմտ. «стоять на часах»: Այս թյուրիմացությունը չէր լինի, եթե բառի փոխարեն տրվեր բառակապակցությունը:

8 Եթե ձմեռային-ը ռազմական տերմին է, ապա ինչու է բացակայում ամառային-ը, զարնանային-ը և այլն, մինչդեռ ռազմական տերմինաբանության մեջ ունենք՝ ձմեռային համազգեստ և ամառային համազգեստ տերմինային կապակցությունները:

9 Այստեղ փոխել նշանակում է менять և ոչ թե изменять, որին հայերենում համապատասխանում է դավաճանել բառը: Այսպիսով, փոխել և դավաճանել բառերը հայերենում հոմանիշներ չեն, իսկ ռուսերենում менять և изменять բառերը հոմանիշներ են, քանի որ изменять բառն ունի երկու նշանակություն՝ փոխել և դավաճանել:

10 Տե՛ս «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանը»: Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանում» հանդիպում է, օրինակ, брюки բառը իբրև ռազմական տերմին:

11 Այն, որ հեղինակը տարբեր բառակապակցություններում դիմում է տարբեր բառերի (խզատակ, ծոծրակ), նույնպես վկայում է այն մասին, որ ռազմական տերմինաբանությունը այդ շրջանում դեռևս կազմավորման փուլում էր:

12 А. А. Реформатский, Что такое термин и терминология («Вопросы терминологии», М., 1961, с. 3).

տերմինային առանձնահատկությունը: Ըստ Ռեֆորմատսկու՝ տերմինը կապված է ոչ թե համատեքստի, այլ միայն տերմինաբանական դաշտի հետ, քանի որ «տերմինաբանական դաշտը» երևան է գալիս միայն համատեքստում: Մյուս կողմից, տերմինի և ոչ տերմինի միջև հստակ սահմանագատում դժվար է անցկացնել: Ինչպես վերը նշվեց, լեզվի սովորական բառերը հաճախ դառնում են տերմիններ. օրինակ, օդ, ջուր, երկաթ, աղ, թթու և այլն քիմիայում տերմիններ: Են, մինչդեռ ընդհանուր լեզվում՝ սովորական գործածության բառեր: Նույնը տեղի է ունեցել նաև շոքու, գերան, նաղ, խաչմերուկ, անանուխ, դադձ, կաղնի, բղկի, բարդի, սոսի և այլ բառերի հետ: Այդպիսով, տերմինաբանական յուրաքանչյուր համակարգի միավորների մի զգալի մասը կազմում են այնպիսի տերմիններ, որոնք վերցված են ընդհանուր լեզվի բառապաշարից իբրև «պատրաստի բառեր», մյուս մասը կազմվում է լեզվի բառակազմական տարրեր միջոցներով: Լեզվի «պատրաստի բառերի» տերմինացումը նույնպես տերմինակազմում է: Հաճախ տերմինացման գործընթացում այդ «պատրաստի բառերը» ենթարկվում են իմաստափոխության: Այս դեպքում նոր իմաստ արտահայտելու համար ոչ թե ստեղծվում է նոր կաղապար, այլ հին կաղապարին տրվում է նոր նշանակություն: Տերմինակազմության այդ եղանակին բնորոշ է, որ տերմինացման ենթարկվող հասկացությունը միշտ էլ ունենում է որևէ ընդհանրություն այդ բառը ներկայացնող հասկացության հետ՝ ըստ կաղապարի, գործածության և այլն: Հին առարկայի անվանումը նորին տալու դեպքում անպայման հարկավոր է գտնել այդ երկու առարկաների համար որևէ ընդհանուր հատկանիշ: Ի դեպ, այդ հատկանիշը կարող է լինել ոչ միայն գրել-խափորը, որոշիչը, այլև նույնիսկ բոլորովին երկրորդական և պատահական:

Տերմինակազմության հիմնական աղբյուրը լեզվի բառակազմական ներքին հնարավորություններն են: Լեզվի ներքին միջոցներով նոր տերմինների ստեղծումը հայոց լեզվի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից է: Այն իրագործվում է տարբեր եղանակներով, որոնք պայմանավորված են լեզվի իմաստաբանական և բառաքերականական համակարգի առանձնահատկություններով: Ժամանակակից հայոց լեզվում գոյություն ունեն բառակազմական ներքին միջոցներով տերմիններ ստեղծելու մի շարք եղանակներ, որոնցից պետք է նշել բառի նշանակության կամ իմաստի տերմինացումը, այսինքն՝ բառաիմաստաբանական եղանակը, այն է՝ լեզվական տարրեր ոլորտների բառերի՝ իմաստափոխության հետևանքով որպես տերմինի օգտագործումը: Ինչպես նաև կենցաղային, գրաբարյան, բարբառային բառերի տերմինացումը:

Գոյություն ունեն տերմինակազմության երկու սկզբունք՝ առաջնային և երկրորդային: Առաջինը իրագործվում է այն դեպքում, երբ տերմինը ստեղծվում է սովորական բառը որպես տերմին օգտագործելու կամ սովորական բառերից բարդություններ և բառակապակցություններ կազմելու եղանակով, երկրորդը՝ երբ նոր տերմին է ստեղծվում արդեն գոյություն ունեցող տերմիններից իմաստափոխության, բառակազմության կամ էլ բառակապակցության միջոցով:

Այսպիսով, ըստ իրենց ստեղծման բնույթի տերմինները ստորաբաժանվում են երկու խմբի. ա) տերմիններ, որոնք ստեղծվել են ոչ տերմինաբանական բնույթի բառերի հիման վրա, բ) տերմիններ, որոնք կերտվել են հայոց լեզվի բառակազմական միջոցների օգնությամբ: Ոչ տերմինաբանական բառերը որպես տերմին օգտագործելու խնդիրը մի շարք բարդ և դժուար շատ թույլ լուսաբանված հարցերի հետ է կապված: Խոսքը բառի նույնության մասին է հատկապես, որն իր հերթին կապված է բազմիմաստության հետ: Յուրաքանչյուր դեպքում հարկավոր է պարզել՝ արդյոք գործ ունենք հատուկ նշանակություն ունեցող, առանձին գործառնությամբ օժտված միևնույն բառի, թե՞ երկու տարբեր բառերի հետ:

Ժամանակակից հայոց լեզվի տերմինաբանական համակարգում տերմինների կազմման հիմնական եղանակը լեզվի սովորական համագործածական,

ինչպես նաև գրաբարյան, բարբառային, կենցաղային և այլ բառերի տերմինացումն է: Դա նշանակում է, որ ժամանակակից հայերենի լեզվական տարրերը շերտերին պատկանող այդ կարգի բառերը կոնկրետանում և վեր են ածվում տերմինի:

Բառի տերմինացման միջոցներից մեկն էլ կենցաղային բառերի՝ որպես տերմին, օգտագործումն է: Մի կողմից տերմինաբանական, մյուս կողմից՝ կենցաղային բառապաշարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնադիտական տերմինաբանությունը շատ հաճախ ստեղծվում է կենցաղային բառապաշարի հիման վրա: Վ. Պրոխորովան¹³ նշում է, որ տերմինաստեղծման այդ գործընթացի օրինակափությունը բխում է կենցաղային և տերմինային բառապաշարի ընդհանրությունից, որի էությունը հետևյալն է. նախ՝ և՛ կենցաղային բառերը, և՛ տերմինները ամենից հաճախ հանդես են գալիս անվանողական գործածությամբ, երկրորդ՝ և՛ կենցաղային բառերը, և՛ տերմինները համարժեք ու համազոր են իրենց արտահայտած հասկացությանը և հարաբերականորեն մեխանիստ են: Երրորդ՝ կենցաղային բառերը մտնում են ընդհանուր բառապաշարի որոշ խմբի մեջ այնպես, ինչպես տերմինները՝ որոշ տերմինաբանական շարքի, ավելի ճիշտ՝ տերմինաբանական դաշտի մեջ: Սակայն կենցաղային և տերմինային բառերի միջև կան նաև տարբերություններ: Տերմինը միայն այն դեպքում է տերմին, երբ գտնվում է միասեռ տերմինների շրջանում: Կենցաղային բառապաշարին պատկանող բառն այդ իմաստով ավելի ինքնուրույն է: Բացի այդ, մասնագիտական տերմինաբանությունը օգտագործվում է մարդկանց որոշակի խմբի կողմից և ավելի մեծ հաճախականությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տերմինային և կենցաղային բառերը ոչ միայն փոխադարձ կապի մեջ են գտնվում, այլև փոխադարձաբար թափանցելի են: Այս բառախմբերի փոխազդեցությունը և փոխադարձ ներթափանցումը հետաքրքիր գործընթաց են յուրաքանչյուր լեզվում, այդ թվում նաև հայերենում: Այս դեպքում նույնպես նկատվում է բառի տերմինացում և տերմինի ապատերմինացում, այսինքն՝ մի կողմից կենցաղային բառը դառնում է տերմին, նեղացնելով իր գործածության ոլորտը, մյուս կողմից տերմինը դառնում է կենցաղային բառապաշարի սեփականություն՝ ընդլայնելով իր գործածության ոլորտը: Այդպիսով, կենցաղային բառը դառնում է տերմին, չգաղարելով գործածվել որպես կենցաղային բառ: Այսինքն՝ նույն բառը կարող է հանդես գալ և՛ որպես տերմին, և՛ որպես ոչ-տերմին՝ որպես լեզվի սովորական, համագործածական բառ: Վերահիշյալ գործընթացներում որոշակի դեր են խաղում արտալեզվական գործոնները. այդ բառերով նշանակված հատկանիշների, երևույթների հրատապությունը և հասարակական նշանակությունը:

Սովորաբար լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ են մտնում այն տերմինները, որոնք տվյալ պատմական փուլում առավել նշանակալի դեր են խաղում և արագորեն զարգանում են: Այդ տեսակետից և՛ կենցաղային բառերը, և՛ մասնագիտական տերմինները նպաստում են լեզվի բառային կազմի հարստացմանն ու զարգացմանը: Գիտական և կենցաղային բառապաշարների միջև գոյություն ունի ուղղակի և սերտ կապ: Յուրաքանչյուր գիտություն իր հետագա զարգացման ընթացքում խոսակցական լեզվից չի կտրվում¹⁴:

Ժամանակակից հայոց լեզվի տերմինաբանությանը բնորոշ են նաև այսպես կոչված ներլեզվական «փոխառությունները»¹⁵ գրաբարից և արևմտահայ-

¹³ В. Н. Прохорова, Бытовая лексика в языке московских памятников II половины XVII в. (автореферат канд. дисс.), М., 1953, с. 7.

¹⁴ В. В. Виноградов, Основные типы лексических значений слова («Вопросы языкознания», 1953, № 5, с. 5).

¹⁵ С. А. Асланян, Внутриязыковые заимствования—источник терминологического обогащения («Актуальные проблемы лексикологии», Новосибирск, 1971); նույնի՝ Пу-

յերենից: Պետք է նշել, սակայն, որ գրաբարից և արևմտահայերենից անցած բառերը ոչ միշտ են ենթարկվում տերմինացման, քանի որ վերջիններս շատ դեպքերում արդեն պատրաստի տերմին են և փոխ են առնվում որպես այդպիսին: Տերմինակազմության այս եղանակն ունի այն առավելությունը, որ լեզվի բառային կազմը պահպանվում է մաքուր վիճակում, լեզուն չի ողողվում օտարազգի անհարկի փոխառյալ բառերով, և այդ բառ-տերմինը տվյալ լեզուն գործածող յուրաքանչյուր անհատի համար հասկանալի է մնում: Անհրաժեշտ է նշել նաև, որ լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող բառերի տերմինացումը ժամանակակից հայերենում տերմինների կազմության գործուն և կենսունակ միջոցներից է և լայն շահերով կիրառվում է գիտության ու տեխնիկայի նորանոր բնագավառների տերմինների ստեղծման գործում: Տերմինների ստեղծման այդ եղանակը, ինչպես արդեն նշվեց, ունի մի շարք առավելություններ¹⁶: Որպես լեզվում արդեն գործածված բառեր այդ եղանակով ստեղծված տերմիններն ավելի մատչելի են, կազմությամբ ավելի հարմար և, ու: կարևոր է, դրանք հեշտությամբ են հիշվում: Մի խոսքով՝ օժտված են տերմինի բոլոր առանձնահատկություններով:

Լեզվում լայն տարածում ունի նաև բառիմաստի փոփոխմամբ նոր տերմինի ստեղծումը: Հետաքրքիր են այն բառերի իմաստափոխությունները, որոնք կապված են մարմնի մասերի անվանումների հետ: Այդ կարգի տերմիններ են կազմվում տարբեր լեզուներում: Հատկանշական է, որ մեքենայի նույն մասը տարբեր լեզուներում կարող է համեմատվել մարմնի տարբեր մասերի հետ: Այսպես, ռուսերենում կան մարմնի մասերի անվանումներից կազմված զանազան մեխանիզմների անուններ *голова* (գլխիկ), *шасси* (աչք), *шасси* (աչք), *шасси* (աչք), *шасси* (աչք) և այլն: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել նաև հայերենից. ունկ (յալկո), ճանկ (քյոյ), շարժաթև (շատյու), ժամանցիկ (շոբատոե քոլեսո), քանակ (քեդալ), զբոսիկ (շոլոկա) և այլն:

Եթե սովորական բառը դառնում է գիտատեխնիկական տերմին, ապա տվյալ տերմինների համակարգում ստանում է որոշակի բովանդակություն և այդ բառի նախորդ նշանակությանը ավելանում է մի նոր իմաստ՝ տերմինաբանական. օրինակ, խոնարհում բառն ունի հետևյալ իմաստները. 1) դեպի ներքև թեքվելը, կռանալը, 2) ընկճվելը, հպատակվելը, 3) բայի քերականական կարգերի ամբողջականությունը¹⁷: Վերջին նշանակությունը տերմինաբանական է և այդ իմաստով՝ ավելի նեղացված: Սակայն իմաստի նեղացումը դեռևս մասնագիտական տարբերակում չէ: Իմաստափոխությամբ այս կամ այն տերմինը կազմվում է բառիմաստի նեղացմամբ կամ մասնագիտական սահմանազատման միջոցով, երբ այդ բառը կորցնում է իր նախկին, լայն իմաստը. օրինակ, հողով բառը հայերենում սկզբում նշանակել է թավալում, հողով գալը, գլորվելը, իսկ այժմ իմաստի նեղացման շնորհիվ դարձել է քերականական տերմին:

Տերմինների առաջացումը ժամանակակից հայերենում կատարվում է ոչ միայն լեզվի ընդհանուր բառապաշարի բառերի տերմինացման, տերմինային իմաստների ձեռք բերելու միջոցով, այլ նաև այդ կարգի բառերի իմաստափոխմամբ: Ըստ որում՝ լեզվի սովորական բառերը տերմինանում են իմաստափոխության զանազան տեսակներով՝ իմաստների լայնացմամբ, նեղացմամբ, ըստ գործառնության ձևի և այլն: Բառապաշարի մասնագիտական տարբերա-

ти и источники терминообразования в армянском языке (автореферат канд. дисс.), Ереван, 1971.

¹⁶ А. М. Терпигорев, Об упорядочении технической терминологии («Вопросы языкознания», 1953, № 1).

¹⁷ О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, с. 449.

կումը գլխավորապես կատարվում է բառիմաստի ընդլայնմամբ կամ նեղացմամբ: Բառիմաստի ընդլայնումը իմաստափոխական այն երևույթն է, երբ բառը կորցնում է իր էական հատկանիշների մի մասը և դրանով ընդարձակում իր ծավալը: Բառիմաստի ընդլայնմամբ անձնանունները, տեղանունները հաճախ հասարակ անուն են դառնում, օրինակ, ամպեր, վոլա, վոլգա, մեքեր-շմիդա և այլն: Բառիմաստի նեղացումը տեղի է ունենում բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորմամբ: Այսպես, ըստ իմաստային գործառույթյան լեզվի ընդհանուր բառապաշարի ռաբ բառը վեր է ածվել ռազմական տերմինի «հրացանի ոտք» հասկացության մեջ, պառալը՝ բժշկական տերմինի «սաղմ» նշանակությամբ և այլն:

Ռազմական տերմինաբանության մեջ բառիմաստի ընդլայնմամբ կամ նեղացմամբ լեզվի սովորական ճոճակ, ձագար, նակա, շամփուր և այլ բառեր դարձել են ռազմական տերմիններ, որպես ուսանողների граната, воронка, фронт, шомпол բառերի համարժեքներ: Նույն ձևով կռուկ, ցուկ, սայր և բազմաթիվ այլ բառեր շինարարական տերմինների են վերածվել որպես ուսանողների кран, штевен, шпиль հասկացությունների համազորներ:

Բառիմաստի փոփոխմամբ տերմինակերտման դեպքում բառը ձեռք է բերում նաև փոխաբերական իմաստ: Տերմինացման ժամանակ բառերի փոխաբերական իմաստով գործածվելու օրինակ կարող են ծառայել ծոծրակ, բուշ, բշիկ բառերը հետևյալ տերմինակապակցություններում՝ գեղացի փակաճի կմախքի բշեր (щeki ocoвa зaмкa пyлeмeтa), ատրճառակի կոթի բշեր (щeki pyкoятkи peвoлyбepa), անվավոր շղթայի բշիկներ (щeki poлyкoвoй чeпy): Երբեմն բառն օգտագործվում է իր ուղղակի իմաստով և տերմինացումը կատարվում է ոչ թե «փոխաբերության» եղանակով, այլ, ինչպես վերը նշվեց, բառակապակցության ձևով: օրինակ, հաճախվել է ծոծրակի գծով (равняться в зaтyлoк), կանգնել առաջին համարների ծոծրակի գծով (стоять в зaтyлoк пepвыx): Համեմատության համար բերենք զննարկի «ծոծրակ» տերմինակապակցությունը, որտեղ ծոծրակ բառը փոխաբերական իմաստ ունի:

Այսպիսով, երբ ընդհանուր լեզվի բառը դառնում է տերմին, այն ստանում է որոշակի նշանակություն տվյալ տերմինների համակարգում և նրա հիմնական իմաստին ավելանում է նոր՝ տերմինային իմաստ: Կարևոր է նշել նաև, որ այդ իմաստը ստանալուց հետո բառի սկզբնական ոճական գունավորումը չեզոքանում է:

Տերմինացման գործընթացի վերլուծության հետ կապված վերջին հարցն այն է, թե որ պահից է ընդհանուր լեզվի բառն այս կամ այն մասնաճյուղի տերմին դառնում: Ընդհանուր կամ տերմինաբանական բառարանների միջոցով դա հնարավոր չէ որոշել, քանի որ վերջիններս նախ՝ չեն ընդգրկում ամբողջ տերմինաբանական բառապաշարը և երկրորդ՝ չեն արտահայտում լեզվի մեջ կատարվող տերմինակերտման արդյունքները: Այդ իսկ պատճառով վերջերս տերմինաբանական գրականության մեջ առաջարկվում է մտցնել «տերմինացման շեմ» հասկացությունը, որը պետք է որոշվի վիճակագրական եղանակով: Որպեսզի բառն ընդունվի որպես տերմին, այն պետք է օգտագործված լինի որոշակի հաճախականությամբ, որոշակի թվով մասնագետների կողմից: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև բանավոր խոսքը, որտեղ տերմինացումը սովորաբար տեղի է ունենում ավելի վաղ, քան՝ գրավոր լեզվում: Տերմինացվող բառերի նոր դերում օգտագործվելը, միանման գործածությունների կրկնությունը գրքից-գիրք և հեղինակից-հեղինակ՝ խոսում է այն մասին, որ այս կամ այն բառն անցել է «տերմինացման շեմը» և արդեն դարձել է տերմին:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ТЕРМИНОЛОГИЗАЦИИ СЛОВА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

СВЕТЛАНА АСЛАНЯН

Р е з ю м е

Одним из источников пополнения терминологической лексики являются внутриязыковые заимствования, в частности, терминологизация слов общего языка.

Попадая в новую сферу, т. е. терминологическое поле, слова общего языка сохраняют старые связи и отношения, свойственные ему как члену определенной лексической системы.

Слова общего языка и терминологическая лексика не только взаимосвязаны, но и взаимопроницаемы. Таким образом, в языке постоянно происходят процессы терминологизации и детерминологизации.

Большая часть терминологизируемых слов терминологизируется только в терминологических словосочетаниях, т. е. вне терминологических словосочетаний такие слова не являются терминами.